ՆԺԴԵՀ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ՀՀ ՄԻՋԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԲԱՆԱՎԵՃԸ ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՇՈՒՐՋ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՏԱՍՆԱՄՅԱԿՈՒՄ

Բանալի բառեր *– միջկուսակցական հարաբերություններ, բազմակուսակցական համակարգ, գաղափարախոսություն, հետխորհրդային տրանսֆորմացիա, Հայաստանի Երրորդ Հանրապետության պատմություն, անկախություն, հասարակական-քաղաքական կյանք, ՀՀՇ, ՀՅԴ*

Հայաստանի քաղաքական կազմակերպությունների միջև 1991-2001 թթ. բանավեճը ընթանում էր ոչ այնքան քաղաքագիտական դասական կանոններով՝ ըստ պահպանողականության, լիբերալիզմի կամ սոցիալիզմի սկզբունքների, որքան ազգային հիմնահարցերին առնչվող տարակարծություններով: Այդ համատեքստում առանձնահատուկ էր հայ-թուրքական հարաբերությունների թեման, որը քաղաքական բանավեճի կենտրոնում հայտնվեց 1988 թ. շարժման մեկնարկից: Բանավեճի մի կողմում 1988-1991 թթ. համաժողովրդական շարժումը ղեկավարող «Ղարաբաղ» կոմիտեն ու վերջինիս անդամների ստեղծած կուսակցությունները (Հայոց համազգային շարժում (ՀՀՇ), Ազգային ժողովրդավարական միություն (ԱԺՄ) և այլն) էին, որոնք կողմնակից էին Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորման առանց նախապայմանների, իսկ սփյուռքյան հայկական կազմակերպությունները, մասնավորապես Հայ հեղափոխական դաշնակցությունը (ՀՅԴ) հանդես էին գալիս պահանջատիրական կարգախոսով: Վերջինիս հետ այս հարցում համակարծիք էր Հայաստանի կոմունիստական կուսակցությունը (ՀԿԿ): Իսկ ահա Հայաստանում գործող մյուս կուսակցությունները, ինչպես օրինակ՝ Հայաստանի հանրապետական կուսակցությունը (ՀՀԿ), Ազգային ինքնորոշում միավորումը (ԱԻՄ), Սահմանադրական իրավունք միությունը (ՍԻՄ), Հայաստանի քրիստոնեա-դեմոկրատական միությունը (ՀՔԴՄ), Հայաստանի ռամկավար ազատական կուսակցությունը (ՀՌԱԿ), Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցությունը (ՍԴՀԿ), Հայաստանի դեմոկրատական կուսակցությունը (ՀԴԿ) և այլն, գերազանցապես հարում էին առաջին քաղաքական կազմակերպություններին՝ երբեմն մասնակցություն ունենալով գաղափարական բանավեճին:

Հաշվի առնելով խորհրդային 70 տարիների ներփակ բնույթը և Թուրքիայի հետ հարաբերությունները «tête-à-tête» ճշգրտելու անակնկալ շրջադարձը՝ քաղաքական կազմակերպությունների կողմից խնդրի հակասական

ընկալումը լիովին բնական է թվում[1]: Այս առումով հիշարժան է 1988 թ. մարտի 22-ին «Ղարաբաղ» կոմիտեի անունից Վազգեն Մանուկյանի հայտարարությունը, որտեղ նշվում էր պանիսլամիզմի ու պանթուրքիզմի գաղափարախոսությունների նշանակությունը Հայաստանում մեկնարկած շարժման համար: «Ղարաբաղ» կոմիտեն գտնում էր, որ պանիսլամիզմը, որ ձգտում էր միավորել իսլամական երկրները Արևմուտքի տնտեսական և մշակութային ներխուժման դեմ, և պանթուրքիզմը, որ հետապնդում էր բոլոր թուրքալեզու ժողովուրդներին մեկ պետության մեջ միավորելու նպատակ, ուղղված չէին հայ ժողովրդի դեմ[2]: ՀՀՇ-ի գաղափարական առանցքային սկզբունքը դարձած այդ համոզմունքի պատճառն այն էր, որ սրբազան պատերազմներն այլևս անցյալում էին. Թուրքիան հրաժարվել էր կրոնական տարբերությունները և ընդհանրությունները առաջնային համարելուց ու ձգտում էր ժամանակակից գործիքակազմով բավարարել սեփական ազգային ու պետական շահերը[3]:

1989 թ. հունիսի 24-ի ՀԽՍՀ ԳԽ նստաշրջանում ՀՀՇ-ի՝ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման փիլիսոփայությունը հրապարակել էր «Ղարաբաղ» կոմիտեի անդամ Լևոն Տեր-Պետրոսյանը: Վերջինս կոչ էր անում Հայաստանը չդիտել իբրև պանթուրքիզմի ծրագրերը խոչընդոտող գործոն, քանզի այդ պարագայում Հայկական հարցը կարող էր ներքաշվել միջազգային քաղաքականության մանվածապատ ոլորտ, ինչը Հայաստանին ձեռնատու չէր: Մերժելով պանթուրքիզմը որպես սպառնալիք ընդունող մտայնությունը՝ ՀՀՇ-ն կոչ էր անում Հայկական հարցը միջազգային հարաբերությունների էժանագին խաղաքարտ չդարձնել[4]:

ՀՀՇ-ի՝ հայ-թուրքական հարաբերությունների տեսլականի ձևակերպման հարցում առանցքային դերակատարություն ունեցավ Ռաֆայել Իշխանյանը՝ հանդես գալով արտաքին քաղաքական հարաբերություններում «երրորդ ուժի բացառման» պայմանով: Նա գտնում էր, որ անհրաժեշտ է ամրապնդել հայ ժողովրդի՝ բացառապես սեփական ուժերին ապավինելու գիտակցությունը[5]: Նրա կարծիքով, շարժումը պետք է առաջնորդվեր «գոյատևելու բանականությամբ»՝ գիտակցելով, որ Հայկական հարցին լուծում տվողը բացառապես անկախ Հայաստանն էր[6]: Արդ, ՀՀՇ-ի գաղափարաբանական սկզբունքների համաձայն՝ պետությունները կարող էին սոսկ դաշ-

---

[1] Տե՛ս **Astourian S**., From Ter-Petrossian to Kocharian: Leadership Change in Armenia, Berkeley, 2000-2001, p. 18:

[2] Տե՛ս **Մանուկյան Վ.**, Հայկական երազանքը գոյատևման փակուղում (ելույթների և հոդվածների ժողովածու), Երևան, 2002, էջ 3-4:

[3] Տե՛ս նույն տեղում, էջ 11:

[4] Տե՛ս «Դրոշակ», 24 հուլիսի 1989:

[5] Տե՛ս **Իշխանյան Ռ.**, Մահվան ճանապարհը և կյանքի ճանապարհը, Երևան, 1990: Տե՛ս «Հայք», 28 հունվարի 1990:

[6] Տե՛ս **Իշխանյան Ռ.**, Երրորդ ուժի բացառման օրենքը, Երևան, 1991, էջ 60-61:

նակիցներ լինել՝ իրենց համագործակցության հաջողությունը պայմանավորելով ընդհանուր շահերով[1]: Հետաքրքիր է, որ «մշտական շահ» կարգախոսի ծնունդը շարժման անդամների համար միանշանակ չընդունվեց՝ դրա ներսում մի նոր բաժանարար գծի վերածվելով[2]:

Հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումը ՀՀՇ-ի տեսաբանների համար հանգում էր Իսրայելի ու Գերմանիայի օրինակին, ըստ որի՝ չկորցնելով պատմական հիշողությունն ու չուրանալով ազգային ցավը՝ թույլատրելի էր գործակցությունն անգամ Հայոց ցեղասպանություն իրականացրած երկրի հետ: Այս հանգամանքը նույնիսկ միս ու արյուն ստացավ 1991-1993 թթ., երբ Թուրքիայից հացահատիկ էր առաքվում Հայաստան[3]: Ի դեպ, հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման այսօրինակ բանաձևման պատճառով ՀՀՇ-ն մեղադրվում էր «թրքամետության» մեջ, ինչին ի պատասխան՝ կուսակցության առաջնորդ Լ. Տեր-Պետրոսյանը ձևակերպում էր. «Եթե այդպիսին է համարվում Թուրքիայի ճանապարհներով ցորեն և կենսական այլ ապրանքներ ստանալու փաստը, այո՝ այդքանով նույնպես մենք թրքամետ ենք: Միայն թե այդ դեպքում չպետք է մոռանալ, որ դեռևս 1918 թվականին Արամ Մանուկյանի առաջին գործերից մեկը եղել է հայ ժողովրդի ջարդարար Խալիլ փաշայի ձեռքով Հայաստանի սովյալների համար 20.000 փութ ցորենի ստացումը»[4]:

ՀՀՇ-ն գտնում էր, որ հարկ է իրապաշտ լինել՝ դա համարելով փոքր երկրի գոյատևման միակ երաշխիքը: Այս հողի վրա էին քննադատվում ՀԿԿ-ի ու ՀՅԴ-ի դիրքորոշումները՝ դրանք ներկայացնելով որպես ռուսական կողմնորոշում և հակում դեպի ռուսական կայսրությունը: ՀՀՇ-ն, սակայն, Հայաստանի անկախության իրական երաշխիքը առաջնահերթորեն համարում էր Թուրքիայի հետ բարիդրացիական հարաբերությունները[5]: Թե՛ Թուրքիայի և թե՛ Հայաստանի բոլոր հարևանների կառուցողական շփումները ՀՀՇ-ն համարում էր Հայաստանի անվտանգության ու տնտեսական զարգացման երաշխիք, մեկուսացվածության հաղթահարում[6]:

Նման ըմբռնմամբ էր ՀՀՇ-ն նաև վճռականորեն հրաժարվում ՀՀ արտաքին քաղաքականության հիմքում Հայոց ցեղասպանության խնդիրը դնելուց: Կուսակցության դիրքորոշումն էր «համաձայնություն տարաձայնության մասին» կարգախոսը[7]: Լ. Տեր-Պետրոսյանը ցեղասպանությունը համարում

---

[1] Տե՛ս **Մանուկյան Վ.**, նշվ. աշխ., էջ 3-4:

[2] Տե՛ս **Ղազարյան Ռ.**, Հաշվետու եմ, Երևան, 2003, էջ 34:

[3] Տե՛ս **Հակոբյան Թ.**, Կանաչ ու սև, Արցախյան օրագիր. ոչ պատերազմ, ոչ խաղաղություն, Երևան-Ստեփանակերտ, 2011, էջ 238:

[4] **Տեր-Պետրոսյան Լ.**, Ընտրանի (Ելույթներ, հոդվածներ, հարցազրույցներ), Երևան, 2006, էջ 382:

[5] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 5 մարտի 1991:

[6] Տե՛ս **Տեր-Պետրոսյան Լ.**, Հայ-թուրքական հարաբերություններ, Երևան, 2009, էջ 16-17:

[7] Տե՛ս Նույն տեղում, էջ 62:

էր պատմական ու բարոյական, սակայն ոչ քաղաքական խնդիր, որը, պատմության աղետալի իրադարձություն լինելով հանդերձ, չպետք է ընդունվեր իբրև պետության արտաքին քաղաքականության սկզբունք[1]: Հայ դատը համարելով հայ ժողովրդի պատմական իրավունք՝ ՀՀՇ-ն չէր ընդունում այդ գաղափարախոսությունը պետական քաղաքականություն դարձնելու տարբերակը, թեպետ, ի դեպ, Լ. Տեր-Պետրոսյանը չէր բացառում գաղափարախոսությունը պետական քաղաքականություն դարձնելու հնարավորությունը[2]: 1990 թ. նոյեմբերի 24-ին կայացած ՀՀՇ երկրորդ համագումարում նա համոզմունք է հայտնում, որ «Հայ դատը, արևմտահայության իրավունքներն իր պատմական հայրենիքի նկատմամբ պետական քաղաքականության օրակարգի հարց կդառնան միայն այն ժամանակ, երբ հայոց պետությունն ի վիճակի կլինի սեփական ուժերով լուծել այդ խնդիրները»[3]:

ՀՀՇ-ի ու ՀՅԴ-ի՝ քաղաքական հարթակում գաղափարական առաջին լուրջ բանավեճը կայացավ 1991 թ. մարտի 15-ին, երբ նստացույցի և բողոքի հրապարակային գործողությունների միջոցով ՀՅԴ-ն փորձում էր ազդել Գերագույն խորհրդի վրա՝ պահանջելով չեղարկել 1921 թ. մարտի 16-ի Մոսկվայի պայմանագրի՝ Հայաստանի Հանրապետությանը վերաբերող կետերը[4]: Առիթը Մոսկվայում Թուրքիայի նախագահ Թուրգութ Օզալի և ԽՍՀՄ ԿԿ առաջին քարտուղար Միխայիլ Գորբաչովի ու Ռուսաստանի ԳԽ նախագահ Բորիս Ելցինի միջև 1991 թ. մարտի 11-12-ին կայացած հանդիպումներն էին: ՀՀՇ-ն հրաժարվում էր այդ պայմանագրի շուրջ որևէ վերաբերմունք արտահայտելուց՝ դա որակելով արկածախնդրություն[5]: Կուսակցությունն անարդյունավետ էր համարում այդ գործելակերպը՝ պատճառաբանելով, որ վիճակը ցանկացած պահի կարող էր լարվել և նմանվել 1918-1920 թթ. իրադրությանը: Խորհրդարանի նախագահը սփյուռքից հղված հեռագրերը չէր համարում Հայաստանի պետական քաղաքականության վրա ազդելու բավարար պայման՝ մանավանդ հարևան Ադրբեջանի հետ ռազմական գործողությունների հորձանուտում գտնվելու պարագայում:

Առանց Հայոց ցեղասպանության հարցի բարձրացման Թուրքիայի հետ հարաբերությունները քաղաքատնտեսական ուղով զարգացնելու իշխանության ու ՀՀՇ-ի մոտեցումը ՀՅԴ-ն համարում էր Հայ դատի ուրացումը: Ընդունելով հանդերձ ՀՀՇ-ի փաստարկը, որ Հայաստանը մեկուսի ապրել չէր կարող և կարիք ուներ հարևանների հետ խորացնելու տնտեսական հարաբե-

---

[1] Տե՛ս **Libaridian G**., The Challenge of Statehood: Armenian Political Thinking since Independence, Blue Crane Books, Watertown, Massachusetts, 1999, p. 87.

[2] Տե՛ս «Արմենպրես», 30 սեպտմբերի 1990:

[3] **Տեր-Պետրոսյան Լ.**, նշվ., աշխ., էջ 20-21:

[4] Տե՛ս «Ազգ», 16 մարտի 1991:

[5] Տե՛ս **Հակոբյան Թ.**, Հայերը և թուրքերը. պատերազմ, սառը պատերազմ, դիվանագիտություն, Երևան, 2012, էջ 260:

րությունները, ՀՅԴ-ն անպատրաստ էր տնտեսական շահի դիմաց զիջումներ կատարել Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման հարցում[1]: Կուսակցությունը հրաժարվում էր ծայրահեղ մեկնաբանությունից՝ գտնելով, որ Հայոց ցեղասպանության և հայոց պատմական իրավունքների հիշեցումը դեռևս չէր նշանակում Թուրքիային պատերազմ հայտարարել: Նման քաղաքականությունը նա համարում էր Հայաստանի կառավարության սրբազան պարտականություն[2]:

ՀՅԴ-ին առավելապես անհանգստացնում էր համաթուրանական վտանգը: Այդ մասին կուսակցությունը բարաձայնում էր 1988 թ. օգոստոսին ՀՅԴ 24-րդ Ընդհանուր ժողովում՝ դրա քողարկված հանդես գալը վերագրելով մարտավարական նկրտումներին[3]: Կուսակցությունն իր հավատարմությունն էր հայտնում տերություններին ու Թուրքիային ներկայացվող պահանջատիրությանը՝ շարունակելով գործել Հայ դատի շրջանակներում: ՀՅԴ-ն վերահաստատում էր իր անմիջական պարտավորությունները հայ ժողովրդի առջև՝ հայրենի պահանջատիրությունը «առողջ և իրատես հունի մեջ պահելու» միտումով[4]:

ՀՅԴ-ն բոլորովին չէր ընդունում ՀՀՇ-ի կարծիքն առ այն, որ պանթուրքիզմն այլևս արժեզրկված ու մարած էր: Կուսակցությունը դրան հակադրում էր առկա իրավիճակի սեփական վերլուծությունը: Ըստ այդմ՝ Թուրքիան տարածաշրջանում վարում էր հենց պանթուրքիստական քաղաքականություն՝ անթաքույց դրսևորելով իր համապատասխան առաջնահերթություններն ու ձգտումները: Որպես փաստ՝ ներկայացվում էր 1992 թ. հոկտեմբերի 30-31-ին Անկարայում կայացած միջինասիական թուրքալեզու ժողովուրդների ղեկավարների հանդիպումը, որտեղ Թուրքիայի վարչապետ Սուլեյման Դեմիրելն առաջադրել էր թուրքալեզու պետությունների միավորման գաղափարը: Այդ հաշվի առնելով՝ ՀՅԴ-ն համոզված էր, որ թուրքական նպատակներին խանգարում էին լոկ Հայաստանն ու Արցախը: Ուստի կուսակցությունը վճռականապես մերժում էր ՀՀՇ-ի՝ պանթուրքիզմը աչքաթող անելու քաղաքականությունը[5]:

ՀՅԴ-ն կարծես առաջնորդվում էր բարձրագույն առաքելությունների ծրագրի տրամաբանությամբ, որը խարսխվում էր հայոց պատմական հայրենիքի տարածքների միավորման գաղափարի վրա[6]: Դրա հետ մեկտեղ՝ հիշարժան է նաև Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման նախապայ-

---

[1] Տե՛ս **Акопянц А.**, Некоторые аспекты внешнеполитических предпочитаний партий Республики Армения, Издания ПГЛУ, Университетские чтения, Пятигорск, 2013, с. 13:

[2] Տե՛ս «Երկիր», 25 դեկտեմբերի 1991:

[3] Տե՛ս **Հակոբյան Թ.**, նշվ. աշխ., էջ 250:

[4] Տե՛ս «Դրոշակ», 31 օգոստոսի 1988:

[5] Տե՛ս «Ազատամարտ», 30 հոկտեմբերի - 6 նոյեմբերի 1992:

[6] Տե՛ս **Libaridian G.**, նշվ. աշխ., էջ 83-84:

մանը։ Կուսակցության կարծիքով՝ ՀՀՇ-ի մարտավարությունը արհեստական երկընտրանք էր առաջադրում Ռուսաստանի ու Թուրքիայի միջև, որով Հայաստանը տեղավորվում էր թուրք-վրաց-ադրբեջանական վտանգավոր տիրույթում՝ ի հաշիվ Ռուսաստանի հետ հարաբերությունների վատթարացման[1]։ Ըստ ՀՅԴ Բյուրոյի 1989 թ. հուլիսի «Հայտարարագրի»՝ հայ ժողովրդի քաղաքական նկրտումները կարող էին հաջողվել Խորհրդային Միությանը դեպի հայկական պահանջատիրությունը հակելու պարագայում։ Կուսակցությունը չէր բացառում, որ ԽՍՀՄ-ը հետևողականորեն կաջակցեր հայկական հողերի վերատիրացման հարցում՝ հայության ազգահավաքի իրականացման երաշխիքով[2]։ Ուստի ԽՍՀՄ կազմից դուրս գալու և անկախաբար գործելու ՀՀՇ-ի քաղաքականությունը ՀՅԴ-ն վտանգավոր էր համարում՝ նկատի ունենալով և՛ թուրքական սպառնալիքը, և՛ պատմական հողերի վերանվաճման անհնարինությունը առանց ԽՍՀՄ ուժային աջակցության[3]։

Թուրքիայի հետ հարաբերություններում միայն տնտեսական համագործակցություն որդեգրելը ՀՅԴ-ի համար լիովին մերժելի էր, որովհետև այդ դեպքում Հայաստանը ստիպված էր ապավինել դարավոր թշնամուն և ինչ-ինչ օգնության ակնակալիքով հրաժարվել հայ ժողովրդի գոյության հիմքից՝ Հայ դատից։ Ըստ կուսակցության՝ այդպես արհամարհվում էր արևմտահայության հիշատակը[4]։

ԱԺՄ-ն, 1991 թ. ամռանը առանձնանալով ՀՀՇ-ից, իր գաղափարաբանական հիմնական սկզբունքներով մեծապես չշեղվեց «մայր» գաղափարաբանությունից։ Այդուհանդերձ, կուսակցությունը ՀՀՇ-ից բաժանումը մեկնաբանում էր ազգային հարցադրումներից գիտակցաբար խուսափելու հանգամանքով[5]։ Մինչև անկախության շրջափուլը ԱԺՄ-ն հակված էր, Հայոց ցեղասպանությունը չմոռանալով հանդերձ, թուլացնել պահանջատիրության շեշտադրումը և առաջ մղել Լեռնային Ղարաբաղի հարցի հայանպաստ լուծումը։ Կուսակցության պատկերացմամբ՝ Թուրքիայից վախենալ պետք չէր, հատկապես եթե դրա հիմքում պետք է լիներ 1915 թ. ցեղասպանությունը։ ԱԺՄ-ն առաջարկում էր Հայոց եղեռնը ընկալել իբրև քաղաքական մի բարդ խաղ, որը հայերը տանուլ էին տվել։ Կուսակցությունը համոզված էր, որ Թուրքիայի առաջնային նպատակը եվրոպական տերություն դառնալն էր, որի ճանապարհին Հայաստանը չէր կարող վտանգ ներկայացնել և հետևաբար ենթարկվել ինչ-ինչ խարդավանքների[6]։ ՀՀՇ-ի պես ԱԺՄ-ն ընդգծում էր

---

[1] Տե՛ս **Astourian S**., նշվ. աշխ., էջ 32-33.

[2] Տե՛ս «Կամք», 24-25 հուլիսի 1989։

[3] Տե՛ս **Panossian R**., Nationalism and its (Dis)contents, After Independence, Post-Soviet Armenia, The University of Michigan Press, 2006, p. 229։

[4] Տե՛ս «Երկիր», 19 սեպտեմբերի 1991։

[5] Տե՛ս «Հայք», 13 օգոստոսի 1991։

[6] Տե՛ս **Մանուկյան Վ**., նշվ. աշխ., էջ. 15-16։

Թուրքիայի հետ տնտեսական հարաբերությունների կարևորությունը[1]:

Անկախության ձեռք բերումից հետո ԱԺՄ-ն կարևորեց Թուրքիայի հետ բանակցությունների ու ԼՂ հարցի տարանջատման անհրաժեշտությունը՝ միաժամանակ հակվելով այն կարծիքին, որ Հայոց ցեղասպանության ճանաչման հարցի բարձրաձայնումն այլևս անխուսափելի էր[2]: Արտաքին քաղաքականության ոլորտում նման փոփոխությունը կուսակցությունը բացատրում էր նրանով, որ Հայոց ցեղասպանության ճանաչման պայմանի առկայության պարագայում Թուրքիան կզրկվեր հարցը մոռացության մատնելու հնարավորությունից: Ըստ ԱԺՄ-ի՝ կանխվում էր նաև Թուրքիայի՝ տարածաշրջանում միանգամայն այլ նպատակներ հետապնդելու հնարավորությունը[3]:

ԱԺՄ-ն միաժամանակ համոզված էր, որ Հայաստանի լավագույն քաղաքականությունը հավասարակշիռ պահվածքով հանդես գալն էր՝ առանց հակաթուրքական կոալիցիաների մեջ մտնելու[4]: ԱԺՄ-ի մտապատկերում Հայ դատը հառնում էր որպես հայ ժողովրդի ազգային հիմնահարց: Բացի այդ, այն սփյուռքահայության իրավունքի խնդիրն էր սեփական հայրենիքի նկատմամբ: Շեշտելի է, որ կուսակցությունը հայ ազգի դարավոր երազանքի իրականացումը տեսնում էր Հայ դատի դրական լուծման միջոցով[5]: Ի դեպ, նման գաղափարական ըմբռնումներով պայմանավորված՝ զարմանալի չէ, որ 1992-1997 թթ. ԱԺՄ-ն համագործակցում էր ՀՅԴ-ի հետ: Երկու կուսակցությունների գործակցության հիմքում, ըստ էության, ոչ միայն քաղաքական ընդհանուր շահերն էին, այլև նույնահենք գաղափարաբանական ըմբռնումը Հայաստանի արտաքին քաղաքականության հարցում:

Ռուսաստանի հանդեպ իր «հավատարմությամբ» հանդերձ՝ հայ-թուրքական հարաբերությունների հարցում ՀԿԿ-ն հարում էր ՀՅԴ-ի մոտեցմանը: ՀԿԿ-ն, անկախության և ԽՍՀՄ փլուզման նոր իրողություններով պայմանավորված, հայտնվել էր իր համար լիովին անորոշ իրավիճակում[6]: Եվ ահա հարկադրաբար զարթնելով 70-ամյա թմբիրից՝ կուսակցությունը ստիպված էր առերեսվել ինքնիշխան պետության խնդիրներին, որոնք, բացի Հայաստանից, ուրիշ ոչ մեկը չէր լուծելու: Թեպետ ՀԿԿ առաջին քարտուղար Սերգեյ Բաղալյանը հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումը դիտում էր տնտեսական գործակցության շրջանակներում, այնուամենայնիվ հատուկ ընդգծում էր, որ պահանջատիրության հարցը օրակարգից երբևէ դուրս չպետք է թողնել: Ըստ նրա՝ պահանջատիրության կամ Լեռնային Ղա-

---

[1] Տե՛ս «Լրագիր», 12 դեկտեմբերի 1995:
[2] Տե՛ս **Հակոբյան Թ.**, նշվ. աշխ., էջ 258:
[3] Տե՛ս **Մանուկյան Վ.**, նշվ. աշխ., էջ. 306:
[4] Տե՛ս «Երկիր», 13 մայիսի 1992:
[5] Տե՛ս **Մանուկյան Վ.**, նշվ. աշխ., էջ. 137:
[6] Տե՛ս **Libaridian G.**, նշվ. աշխ., էջ 77-78:

բաբաղի հարցերում Հայաստանը ոչինչ չուներ զիջելու[1]: Իսկ ահա Արցախի հարցի հայանպաստ լուծման հավանականությունը ՀԿԿ-ն պայմանավորում էր բացառապես հայ-ռուսական մտերմությամբ՝ հայ-ռուսական բարեկամության պարգևավճարը տեսնելով այդ հարցը Հայաստանի օգտին լուծելու միջոցով: Փաստորեն, դիրքորոշում որդեգրելու իրավունքը Մոսկվային զիջած ՀԿԿ-ն անկախությունից հետո պետք է շարունակեր հայացք ձգել առ մի այնպիսի կայսրություն, ինչպիսին դիտվում էր Ռուսաստանը, այն է՝ ի վիճակի էր ապահովելու Հայաստանի անվտանգությունը: Այդ տրամաբանության շրջանակներում է հարկավոր դիտարկել նաև ՀԿԿ-ի քարոզչությունը Հայաստանը Ռուսաստան-Բելառուս միությանը միացնելու ուղղությամբ[2]:

Այսպիսով, ՀՀՇ-ի ու ՀՅԴ-ի բանավեճի շրջանակներում միմյանց էին բախվում Հայաստանի քաղաքական անցյալը քննող և ապագան բանաձևող երկու հիմնական հոսանքները: Դրանք անկախության հետագա փուլում պետք է ճյուղավորվեին, սակայն չկորցնեին իրենց հիմնական բովանդակությունը: Ըստ էության, ԽՍՀՄ գոյության վերջնափուլում և ՀՀ անկախության առաջին տասնամյակում տիրապետողը ՀՀՇ-ՀՅԴ հակադրությունն էր, որտեղ երկու կուսակցությունները տալիս էին Հայաստանի առջև ծառացած ամենակենսական հարցերի սեփական մեկնությունն ու լուծման տեսլականը: Այդ տարիներին դրանք ներկայացնում էին հայ-թուրքական հարաբերությունների երկու հակադիր ընկալում, որոնցից մեկը այդ հարաբերությունների կարգավորումը տեսնում էր Հայոց ցեղասպանության հարցի արծարծմամբ, մյուսը համոզված էր, որ դա խանգարելու էր բարիդրացիականացման գործընթացին:

1991-1998 թթ. ՀՀ արտաքին քաղաքականության մեջ Հայոց ցեղասպանությունը հիմնադրույթային նշանակություն չուներ, ինչը քաղաքական ասպարեզում ՀՀՇ-ՀՅԴ բանավեճում առաջինի փիլիսոփայության հաղթանակի վկայությունն էր: 1998 թ. ի վեր ՀՀ արտաքին քաղաքականության օրակարգում Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը անկյունաքարային դերակատարություն ստացավ: Այլ կերպ ասած՝ արտաքին քաղաքականության մշակողների մոտ գերակայեց ՀՅԴ-ի մոտեցումը: Եթե անկախության առաջին տասնամյակում հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման ներհայաստանյան բանավեճում թելադրողը ՀՀՇ-ի ըմբռնումն էր, ապա 1990-ական թթ. վերջը նշանավորվեց գաղափարական մարտում ՀՀՇ-ի տեսակետի նահանջով ու ՀՅԴ-ի գաղափարական դիրքերի ամրապնդմամբ: Իսկ գործունեություն ծավալող մյուս կուսակցությունները, սեփական կարծիքով հանդերձ, գործում էին ՀՀՇ-ՀՅԴ առանցքում՝ ներդաշնակելով նրանց քաղաքական ընկալումները:

---

[1] «Հայաստանի Հանրապետություն», 4 սեպտեմբերի 1996:

[2] **Libaridian G**., նշվ. աշխ., էջ 77-78:

Нждэ Овсепян – ***Межпартийные дебаты по вопросам урегулирования армяно-турецких отношений в первом десятилетии независимости Республики Армения***

Межпартийные дебаты в начале 1990-х годов не были сосредоточены исключительно на внутренних и внешних политических проблемах Армении. Распад СССР и независимость страны создали новую обстановку для политических дебатов, так как внешнеполитические проблемы нашли свое место в повестке дня политических сил. В этом контексте следует обратить внимание на политическое восприятие армяно-турецких отношений у армянских политических партий. Отношения между Республикой Армения и Турецкой Республикой осложнены особенно вопросом признания Геноцида армян. В таких условиях возникли разногласия между политическими партиями Армении: можно ли установить дипломатические отношения без официального признания Геноцида? В то же время армянские политические партии не смогли прийти к согласию насчет того, была ли Турция угрозой для Армении, лишенной поддержки СССР, или нет.

Nzhdeh Hovsepyan – ***Inter-Party Debate over Normalization of Armenian-Turkish Relations in the First Decade of Independence in the Republic of Armenia***

In the 1990s, the inter-Party debate did not focus exclusively on domestic issues in the Republic of Armenia. The collapse of the USSR and the newly gained independence created a new reality for political debates, bringing foreign policy issues in the agenda of inter-party relations. In this context the normalization of Armenian-Turkish relations found its way to become a major obstacle for inter-party agreement. During the final period of the USSR and first days of independence the political spectrum of Armenian had to face the lack of experience in relations with Turkey after 70 years of Soviet domination. Relations between Armenian and Turkish Republics were tense especially because of the Armenian Genocide issue and under these circumstances the political parties of Armenia could not agree whether the establishment of diplomatic relations with Turkey should prevail over any preconditions and especially the official recognition of the Genocide. Simultaneously the political parties of Armenia had fundamental differences in perception of Turkey as a threat to independent Armenia without the support of the Soviet Union.